ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«07» 01 2026թ.
№ ԿԱԼՈՒՄ 2/15

«ԷՍ ԵՎ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 01360111)
տնօրեն Ս. Թադևոսյանին
հասցե՝ ՀՀ ք. Երևան, Նազարբեկյան 13
էլ. հասցե՝ tadevos89@bk.ru
հեռ. +374 77 28 62 27

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԷՍ ԵՎ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 15.10.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-8/30-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը Պայմանագրի 8.14 կետով սահմանված՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրել և ՀՀ պաշտպանության նախարարություն չի ներկայացրել Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող համաձայնագիրը:

Հիմք ընդունելով Պայմանագրի 8.14 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2026թ. հունվարի 07-ին, միակողմանի ամբողջությամբ, լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի ապահովման գումարը կազմում է **3 588 000** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին, իսկ որակավորման ապահովման գումարը կազմում է **5 382 000** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Ընդ որում, Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում, «ԷՍ ԵՎ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից, կանխիկ փողի ձևով ներկայացրած հայտի ապահովման գումարը գանձելու գրավոր համաձայնությունը տրամադրելու, պայմանագրի և որակավորման ապահովման գումարները մինչև 16.01.2026թ. ներառյալ, Ձեր կողմից վճարվելու դեպքում՝ «ԷՍ ԵՎ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Պայմանագրի և որակավորման ապահովման գումարներն անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները, ինչպես նաև կանխիկ փողի ձևով ներկայացրած հայտի ապահովման գումարը գանձելու գրավոր համաձայնությունը մինչև 16.01.2026թ. ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2072 սենյակ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «ԷՍ ԵՎ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովման գումարը գանձելու գրավոր համաձայնությունը չտրամադրելու, պայմանագրի և որակավորման ապահովումների գումարները սահմանված ժամկետում չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միջոցներ կձեռնարկվեն «ԷՍ ԵՎ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից վճարման ենթակա՝ հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարները գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ